**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար <<Հեծանվային սպորտի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցների>> կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/28 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի հոկտեմբերի 22-ին կնքված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/28 պայմանագրում 2019 թվականի դեկտեմբերի 3-ին և դեկտեմբերի 6-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունները պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթերի պատճենները:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 1549-Ն որոշում: |
| Փոփոխության նկարագրություն | <<Հեծանվային սպորտի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցների>> կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/28 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների տրամադրում և բանկային վավերապայմանների փոփոխություն: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր: |

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**22.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/28 գնման պայմանագրի**

ք. Երևան «03» «դեկտեմբերի» 2019թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՀԳՇՆ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Վ. Հովասափյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 07.11.2019թ. N 1549-Ն որոշումը և Հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի գեղարվեստական մարմնամարզության մարզադահլիճի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար Կողմերի միջև 22.10.2019թ. կնքված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/28 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրում և Պայմանագրի բոլոր հավելվածներում

ա) <<Հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի գեղարվեստական մարմնամարզության մարզադահլիճի>> բառերը փոխարինել <<Հեծանվային սպորտի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցների>> բառերով,

բ) Պատվիրատուի բանկային վավերապայմաններում <<900011011724>> թվերը փոխարինել <<900011027829>> թվերով:

1.2 Պայմանագիրը լրացնել նոր հավելված N2-ով՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 1 (մեկ) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027829
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
<<ՀԳՇՆ>> ՍՊԸ
ք. Երևան, Կիևյան 16
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 115002460570
ՀՎՀՀ 00005417

Տնօրեն՝

Վ. Հովասափյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված
22.10.2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱԾՁԲ-19/28 պայմանագրի
03.12. 2019 թ. կնքված N 1 համաձայնագրի

<<Հավելված N2
22.10.2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱԾՁԲ-19/28 պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 20)

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200/558 | Հեծանվային սպորտի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցների կառուցման նախա-գծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 17 700 000 | 17 700 000 |

>>:

## Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027829
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

Ա. [illegible]յան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
<<ՀԳՇՆ>> ՍՊԸ
ք. Երևան, Կիևյան 16
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 115002460570
ՀՎՀՀ 00005417

Տնօրեն՝

Լ. Հ[illegible]յան
(ստորագրություն)

Կ.Տ.

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
## 22.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/28 գնման պայմանագրի

ք. Երևան «06» դեկտեմբերի 2019թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ԳՇՆ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Վ. Հովասափյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 07.11.2019թ. N 1549-Ն որոշումը և Հեծանվային սպորտի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար Կողմերի միջև 22.10.2019թ. կնքված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/28 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրում և Պայմանագրի բոլոր հավելվածներում Պատվիրատուի բանկային վավերապայմաններում <<900011027829>> թվերը փոխարինել <<900011027811> թվերով:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027811
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ՝**
<<ԳՇՆ>> ՍՊԸ
ք. Երևան, Կիևյան 16
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 115002460570
ՀՎՀՀ 00005417

Տնօրեն՝

Վ. Հովասափյան
(ստորագրություն)

Կ.Տ.